ՏԵՂԵԿԱՆՔ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 35. Արտադրության լիցենզիաները

1.2. Հանձնաժողովի կողմից էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի շրջանակում փոքր հիդրոէլեկտրակայանների դեպքում տասնհինգ տարվա ընթացքում, իսկ էներգիայի վերականգնվող այլ ռեսուրսների կիրառմամբ էլեկտրակայանների դեպքում քսան տարվա ընթացքում տվյալ կայանում արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան ենթակա է գնման (օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիք), բացառությամբ սույն հոդվածի 5-րդ մասում նշված դեպքի: Օրենքով սահմանված՝ էլեկտրաէներգիայի գնման երաշխիքից օգտվելու դեպքում լիցենզավորված անձն իրավունք չունի հետագայում հրաժարվելու դրանից, բացառությամբ սույն օրենքի 59-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքի: Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու պարագայում տվյալ կայանում էլեկտրական էներգիայի արտադրության նոր լիցենզիա տրամադրվելու դեպքում սույն մասով նախատեսված ժամկետը հաշվարկվում է տվյալ կայանի համար սակագնի սահմանման վերաբերյալ առաջին որոշումն ուժի մեջ մտնելու պահից:

Հոդված 39.3. Որակավորված սպառողները

~~1. Որակավորված սպառողը, շուկայի կանոնների համաձայն, ունի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա (հզորություն) գնելու և (կամ) ներկրելու և դրա ավելցուկը էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին վաճառելու իրավունք:~~

1. Որակավորված սպառողը, շուկայի կանոնների համաձայն, իրավունք ունի իր և (կամ) այլ որակավորված սպառողի համար էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում գնել և (կամ) ներկրել էլեկտրական էներգիա և դրա ավելցուկը վաճառել էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցներին:

3. Սպառողների որակավորման~~, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկա նրանց պարտադիր մուտքի~~ պայմանները սահմանում է հանձնաժողովը՝ շուկայի կանոններով:

Հոդված 39.4. Մեծածախ շուկան

1. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ցանկացած մասնակից սույն օրենքին ~~օրենքի պահանջներին~~, շուկայի կանոններին, լիցենզիայի պայմաններին ու պայմանագրերին համապատասխան՝ իրավունք ունի մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա վաճառելու և գնելու, ինչպես նաև էլեկտրական էներգիա ներկրելու:

2. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ցանկացած մասնակից սույն օրենքին ~~օրենքի պահանջներին~~, շուկայի կանոններին, լիցենզիայի պայմաններին ու պայմանագրերին համապատասխան՝ իրավունք ունի արտահանելու էլեկտրական էներգիա՝ ներքին շուկայի պահանջարկը բավարարվելուց հետո:

Հոդված 39.5. Մանրածախ շուկան

2. Սպառողն իրավունք ունի իր հայեցողությամբ ընտրելու մատակարար և շուկայի կանոնների համաձայն՝ փոխարինելու վերջինիս, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի:

Հոդված 39.6. Շուկայի առևտրային և ցանցային կանոնները

2. Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններով սահմանվում են՝

ժ) էլեկտրաէներգետիկական ~~մանրածախ~~ մեծածախ շուկայի աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված կանոնները և ընթացակարգերը:

3. Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոններով սահմանվում են՝

ը1. էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի մրցակցային հատված կամ մեծածախ շուկա սպառողների պարտադիր մուտքի պահանջները, պայմաններն ու ժամկետները.

Հոդված 47. Սպառողների էներգամատակարարումը

8. Այն սպառողը, ով նախորդ օրացուցային տարվա ընթացքում իր 6 (10) կՎ ու բարձր լարման՝ մեկ միլիոն կՎտժ սպառումը գերազանցող բոլոր հաշվառման կետերում միասին սպառել է 12 միլիոն կՎտժ-ից ավելի էլեկտրական էներգիա, պարտավոր է սույն օրենքի և շուկայի կանոնների համաձայն այդ կետերի մասով ստանալ որակավորված սպառողի

կարգավիճակ: Նման կարգավիճակ չստանալու դեպքում սույն մասում նշված սպառողի էլեկտրական էներգիայի մատակարարումն իրականացվում է բացառապես երաշխավորված մատակարարի կողմից, և սպառողն այդ կետում (կետերում) սպառած էլեկտրական էներգիայի համար վճարում է որակավորված սպառողի կարգավիճակ չստացած սպառողների համար հանձնաժողովի սահմանած՝ տարբերակված սակագնով:

Հոդված 59. Անցումային դրույթներ

10. Օրենքով սահմանված՝ էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից օգտվող լիցենզավորված անձինք, բացառությամբ՝ խմելու կամ ոռոգման ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայան շահագործող անձանց՝ այդ կայանի մասով, իրավունք ունեն հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մինչև 2028 թվականի փետրվարի 1-ը հրաժարվել էլեկտրական էներգիայի գնման երաշխիքից, որից հետագայում այլևս օգտվել չեն կարող: Նման դեպքում համապատասխան կայանի համար սակագին չի սահմանվում, իսկ սակագին սահմանելու մասին հանձնաժողովի որոշման գործողությունը դադարեցվում է: